զօրութիւնք զինուորեալ կարի ոտնամուխ առ աշխարհն մեր լինիլ, և ով ոք յանդգնեսցի 'ի բերանոյ սրոյ մերոյ մաշեսցի, և պահեա դրունս մեր ամուր ընդ դէմ պարսոց և յունաց, զի մի՛ ելցէ կերակուր և զէն 'ի մէնջ առ նոցայ, քան զի լրտեսք մեզ պատմեն պատրաստութիւն պարսոց և յունաց վասն պատերազմի, թէպէտ դեսպանք մեր կարի սիրով ընկալեալ նոցայ մինչև յամսեանն Օգոստոսի 18. այլ հարկաւոր է պատրաստել մեզ որպէս նոքայ և այլն։

Եղև 'ի դրունս շօշու 'ի ատենի ծածուկ խորհրդարանի, յայսմ աւուր փետրվարի ամսոյ 5. յամի Տեառն փրկչին մերոյ 1765։

Հաստատեցաւ 'ի մէնջ խորհրդակցաց ծածուկ խորհրդարանին. Մաղաքիայ Գծագիր ○

○ Կնիք նախարարին Հայոց

ԳԼՈՒԽ ՂԳ.

Ով ոք փոխանորդ 'ի յորում գաւառէ եթէ պաշտօնի 'ի տանուտէրութեան, եթէ իշխանութեան եթէ մեռցի և եթէ վասն մեղաց իւրոյ անկանիցէ 'ի պաշտօնէ, փոխանակ նորայ կրկին ընտրեսցի 'ի գաւառէ իւրմէ այլ ոք, որպէս հատոր տասն և չորս երորդ յօրէնս, և մտցի 'ի տեղի ննջեցելոյ ժամանակաւ մնացորդի ժամա-